Հավելված N 16

Հաստատված է
Քաղաքացիական ավիացիայի
կոմիտեի նախագահի
2023 թվականի հունիսի 15-ի
թիվ 267-Ա հրամանով

Կատարված է փոփոխություն
Քաղաքացիական ավիացիայի
կոմիտեի նախագահի
2024 թվականի հունվարի 22-ի
թիվ 34-Ա հրամանով

Կատարված է փոփոխություն
Քաղաքացիական ավիացիայի
կոմիտեի նախագահի
2024 թվականի ապրիլի 30-ի
թիվ 233-Ա հրամանով

(Ինկորպորացված տարբերակ)

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ԹՌԻՉՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ – ՏԵՍՈՒՉ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) թռիչքային գործունեության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գլխավոր մասնագետ-տեսուչ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ-տեսուչ) (ծածկագիրը՝ **22-4-ՔԱԿ-23.3-3**):

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետ-տեսուչն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Գլխավոր մասնագետ-տեսուչն իրեն ենթակա աշխատողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետ-տեսուչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետ-տեսուչներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Աջափնյակ վարչական շրջան, «Զվարթնոց» օդանավակայան:

2. Պաշտոնի բնութագիրը
(Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները)

2.1. Աշխատանքի բնույթը՝

1. իրականացնում է ուսումնասիրություններ և տեսչական ստուգումներ՝ ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող կազմակերպությունների թռիչքային աշխատանքների կազմակերպման և թռիչքային անձնակազմերի անդամների մասնագիտական մակարդակի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով սահմանված պահանջների կատարման ապահովման նպատակով.
2. վերահսկում է թռիչքային աշխատանքների կատարման հիմնական փաստաթղթերի (հիմնական օրինակների) և դրանցում կատարված փոփոխությունների առկայությունը, ինչպես նաև դրանցով սահմանված պահանջների կատարումը.
3. Վարչության պետի հանձնարարությամբ կազմակերպում է թռիչքային անձնակազմի անդամների որակավորման համապատասխանության փաստաթղթերի մշակումը և կիրառումը.
4. իրականացնում է ՀՀ տարածքում գրանցված օդանավ շահագործող կազմակերպությունների թռիչքային անձնակազմի անդամների ստուգումները թռիչքի ժամանակ՝ համաձայն Վարչության ծրագրերի և օդանավ շահագործող կազմակերպությունների հայտերի.
5. իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Վարչության պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.
6. Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օդագնացության համակարգում (PBN) օդանավերի թռիչքի թույլտվության համար ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների և/կամ գրանցված օդանավերի վերաբերյալ թռիչքների թույտվության, թռիչքների կազմակերպման և թռիչքային անձնակազմի պատրաստման ընթացակարգերի վերաբերյալ թույլտվության փաստաթղթերի մշակումը և կիրառումը.
7. իրականացնում է տարեղանակ թռիչքների իրականացման թույլտվության նպատակով (AWO/LVO) օդանավերի թռիչքի թույլտվության համար ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների և/կամ գրանցված օդանավերի վերաբերյալ թռիչքների թույտվության, թռիչքների կազմակերպման և թռիչքային անձնակազմների պատրաստման ընթացակարգերի վերաբերյալ թույլտվության փաստաթղթերի մշակումը և կիրառումը.
8. իրականացնում է երկու շարժիչներով օդանավերի երկարացված տիրույթում թռիչքների (ETOPS/EDTO) օդանավերի թռիչքի թույլտվության համար ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների և/կամ գրանցված օդանավերի վերաբերյալ թռիչքների թույտվության, թռիչքների կազմակերպման և թռիչքային անձնակազմների պատրաստման ընթացակարգերի վերաբերյալ թույլտվության փաստաթղթերի մշակումը և կիրառումը.
9. իրականացնում է Էլեկտրոնային Թռիչքային Պայուսակի (EFB) շահագործման թույլտվության նպատակով ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների թռիչքների իրականացման և թռիչքային անձնակազմի պատրաստման ընթացակարգերի վերաբերյալ թույլտվության փաստաթղթերի մշակումը և կիրառումը.
10. Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է անցկացվող աշխատանքային և մասնագիտական խորհրդակցություններին ու սեմինարներին.
11. Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է Վարչության մարդկային ռեսուրսների հաշվարկներ, անհրաժեշտության դեպքում՝ ներկայացնելով առաջարկություններ.

12. Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է Վարչության աշխատողների մասնագիտական վերապատրաստումների կարիքների գնահատում և մշակում է մասնագիտական զարգացման ու կարիերայի աճի տարեկան ու հեռանկարային պլանները.
13. Վարչություն պետի հանձնարարությամբ մասնակցում է նոր ընդունված աշխատողների նախնական ուսուցման մասնագիտացում (Specialization) և աշխատավայրում ուսուցում (On-The-Job Training) փուլերի գործընթացների իրականացմանը.
14. իրականացնում է թռիչքների անվտանգությանն առնչվող վտանգների հայտնաբերման, ռիսկերի գնահատման, տվյալների հավաքագրման ու վերլուծության գործընթացները թռիչքային գործունեության մասով.
15. տարեկան կտրվածքով վերանայում է թռիչքների անվտանգության ազգային պլանը (National Aviation Safety Plan) թռիչքային գործունեության մասով.
16. վեր է հանում թռիչքային գործունեության մասով թռիչքների անվտանգությանը վերաբերող ռիսկերը, հիմնական բնութագրերի ցուցիչները (Key Performance Indicators), թռիչքների անվտանգության ապահովման արդյունավետության ընդհանուր ցուցիչները, թռիչքների անվտանգության բնութագրերի ցուցիչները (Safety Performance Indicators) և վերահսկում է սահմանվածից շեղման միտումները.
17. իրականացնում է ավիացիոն իրադարձությունների և միջադեպերի զեկույցների գնահատման, վերլուծության, քննության անցկացման, դասակարգման ու վերջնական զեկույցի պատրաստման գործընթացները թռիչքային գործունեության մասով.
18. սահմանում է թռիչքների անվտանգության ընդունելի մակարդակի (Acceptable Level of Safety) գործընթացը թռիչքային գործունեության մասով.
19. իրականացնում է Կոմիտեի թռիչքային պիտանիության վարչության հետ համատեղ օդանավերի նվազագույն սարքավորումների ցանկի (MEL) ուսումնասիրություն, փաստաթղթերի մշակում և մասնակցում է թույլտվության տրամադրման գործընթացին:

Կոմպետենցիա պահանջող գործառույթները կիրառելի են համապատասխան կոմպետենցիան հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:

2.2. Իրավունքները՝

- այլ կազմակերպություններից, պաշտոնատար անձանցից ստանալ Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
- ուսումնասիրությունների և տեսչական ստուգումների արդյունքում հայտնաբերված թերությունների վերացման վերաբերյալ տալ համապատասխան ցուցումներ և պահանջել ձեռնարկել թերությունները վերացնելուն ուղղված համապատասխան գործողություններ.
- Վարչության պետին առաջարկություն ներկայացնել օդանավ շահագործող կազմակերպություններին տրված համապատասխան սերտիֆիկատի, վկայականի, կամ թույլտվության գործողության դադարեցման և/կամ կասեցման վերաբերյալ, եթե վերջինս վտանգում է թռիչքների անվտանգությունը կամ չի համապատասխանում սահմանված չափանիշներին ու կանոնակարգերին.
- Կոմիտեի աշխատողների, պետական մարմինների և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ մասնակցել առաջադրված խնդիրների լուծման մասին աշխատանքային և մասնագիտական քննարկումներին.
- անարգել մուտք գործել ՀՀ օդանավակայանների վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիներ, գտնվել օդանավում, այդ թվում՝ թռիչքի ընթացքում.

- մասնակցել պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն.
- իր իրավասության սահմաններում, Վարչության պետին առաջարկություններ ներկայացնել թռիչքային անձնակազմերի անդամներին սահմանված կարգով տրված լիազորությունների սահմանափակման վերաբերյալ.
- Վարչության պետին առաջարկություն ներկայացնել թռիչքային անձնակազմի անդամների վկայականների գործողության կասեցման կամ դադարեցման վերաբերյալ.
- Վարչության պետին առաջարկություն ներկայացնել օդանավ շահագործող կազմակերպություններին տրված համապատասխան սերտիֆիկատի, վկայականի, կամ թույլտվության գործողության դադարեցման և/կամ կասեցման վերաբերյալ, եթե վերջինս վտանգում է թռիչքների անվտանգությունը կամ չի համապատասխանում սահմանված չափանիշներին ու կանոնակարգերին:

2.3. Պարտականությունները՝

- Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցել ՀՀ-ում գրանցված կազմակերպություններին օդանավ շահագործողի վկայական տալու, դրանց հատուկ դրույթներում նշված թույլտվությունների տրման և ժամկետների երկարացման գործընթացին.
- անցկացնել օդանավի հրամանատարի կամ օդաչու-հրահանգչի պաշտոնի թեկնածուի մասնագիտական գիտելիքների և պրակտիկ աշխատանքի ստուգում.
- թռիչքային կրիչների տեղեկատվության վերծանմամբ վերահսկել թռիչքավարության որակի, թռիչքային անձնակազմերի թռիչքների կատարման և ավիացիոն տեխնիկայի շահագործման կանոնների կատարումը.
- կատարել ուսումնամեթոդական աշխատանքներ ավիացիոն պատահարների վերլուծության արդյունքների հիման վրա.
- մասնակցել Վարչության կողմից թռիչքային անձնակազմի անդամներին սահմանված կարգով համապատասխան վկայականների տրամադրման, գործողության ժամկետի երկարաձգման և դրանց մեջ որակավորման նիշերի համապատասխան գրառումներ կատարելու աշխատանքներին.
- մասնակցել ՀՀ-ում գրանցված կազմակերպություններին, օդանավ շահագործողի վկայական տալու գործընթացին.
- կատարել ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների շահագործողի ձեռնարկների և/կամ դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրություն, Վարչության պետին ներկայացնելով իր մասնագիտական գնահատականը դրանք հաստատելու վերաբերյալ.
- մասնակցել օդանավ շահագործողի վկայականի պահանջների համապատասխանության ապահովման նպատակով իրականացվող մշտական հսկողությանը ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների նկատմամբ՝ համաձայն Վարչության ստուգումների ժամանակացույցի.
- մասնակցել ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների, թռիչքային գործունեություն իրականացնող կազմակերպությունների և/կամ անհատների կողմից շահագործողի առանձնահատկություններում նշված թույլտվությունների տրման և դրանց ժամկետների երկարացման գործընթացին.

- մասնակցել ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների շահագործողի վկայականի կասեցման և/կամ դադարեցման գործընթացին.
- մասնակցել ՀՀ-ում գրանցված կազմակերպություններին ավիացիոն ուսումնական հաստատության վկայական տալու գործընթացին.
- կատարել ՀՀ-ում օդաչու պատրաստող ուսումնական կազմակերպությունների ուսումնական ձեռնարկների և/կամ դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրություն, Վարչության պետին ներկայացնելով իր մասնագիտական գնահատականը դրանք հաստատելու վերաբերյալ.
- կատարել ՀՀ-ում օդաչու պատրաստող ուսումնական կազմակերպությունների ուսումնական ծրագրերի և/կամ դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրություն, Վարչության պետին ներկայացնելով իր մասնագիտական գնահատականը դրանք հաստատելու վերաբերյալ.
- կատարել ՀՀ-ում սրահի անձնակազմ պատրաստող կազմակերպությունների ուսումնական ձեռնարկների, և/կամ դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրություն, Վարչության պետին ներկայացնելով իր մասնագիտական գնահատականը դրանք հաստատելու վերաբերյալ.
- կատարել ՀՀ-ում սրահի անձնակազմ պատրաստող ուսումնական կազմակերպությունների ուսումնական ծրագրերի և/կամ դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրություն, Վարչության պետին ներկայացնելով իր մասնագիտական գնահատականը դրանք հաստատելու վերաբերյալ.
- մասնակցել թռիչքային, սրահի անձնակազմ պատրաստող ուսումնական կազմակերպությունների պահանջների համապատասխանության ապահովման նպատակով մշտական վերահսկողության գործընթացին.
- մասնակցել թռիչքային, սրահի անձնակազմ պատրաստող ուսումնական կազմակերպությունների ուսումնական վարժասարքերի, վթարափրկարարական և այլ սարքեր/սարքավորումների նկատմամբ վերահսկողությանը.
- մասնակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների ճանաչման գործընթացին.
- անհրաժեշտության դեպքում մասնակցել ՀՀ տարածքում, ավիացիոն միջադեպերի քննությանը՝ համապատասխան հանձնաժողովի կազմում.
- որպես ստուգող օդաչու, իր իրավասությունների սահմաններում, կատարել թռիչքներ ՀՀ-ում գրանցված օդանավերի վրա.
- կազմել արձանագրություն և հայտնել օդանավ շահագործող կազմակերպությանը, որի թռիչքային անձնակազմի անդամը թույլ է տվել խախտում՝ թռիչքի նախապատրաստման կամ կատարման փուլում և/կամ ցույց է տվել ցածր մասնագիտական պատրաստվածություն, նրա հետ համապատասխան գործողություններ իրականացնելու անհրաժեշտության վերաբերյալ և կատարած գործողության մասին տեղեկացնել Վարչության պետին.
- Վարչության պետի հանձնարարությամբ կազմակերպել ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող կազմակերպության թռիչքային անձնակազմի անդամների թռիչքային ստուգումներ.
- Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցել Վարչության աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
- իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Վարչության պետի հանձնարարությամբ, նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

- Վարչության պետին, ըստ անհրաժեշտության, ներկայացնել զեկուցագրեր՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող աշխատանքների վիճակի մասին.
- ուսումնասիրել և առաջարկ ներկայացնել վտանգավոր բեռների թույլտվությունների տրամադրման կամ մերժման վերաբերյալ.
- կատարել վտանգավոր բեռների փոխադրման համար Կոմիտեին ներկայացվող հայտերի ուսումնասիրություն, ինչպես նաև մասնակցել օդանավ շահագործողներին և այլ կազմակերպություններին վտանգավոր բեռների փոխադրման վկայականի տրամադրման նպատակով կատարվող աշխատանքներին.
- Կոմիտեի թռիչքային պիտանիության վարչության հետ համատեղ կազմակերպել ՀՀ օդանավ շահագործողների հայտերի քննարկում, անհրաժեշտ աշխատանքների կատարում և փաստաթղթերի ձևակերպում.
- Վարչության պետի կողմից ստանալ հանձնարարականներ օդանավ շահագործող կազմակերպություններին տրված համապատասխան սերտիֆիկատի, վկայականի, կամ թույլտվության գործընթացի վերաբերյալ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

- Բարձրագույն կամ ավիացիոն մասնագիտական կրթություն.
- ունի կամ ունեցել է գծային օդաչուի վկայական.
- հրահանգչի/քննողի որակավորում կամ թռիչքային գործունեության մասնագետի առնվազն 3 տարվա փորձ (համաձայն ICAO doc 8335-ի, 6.2.4 կետի):

3.2. Մասնագիտական գիտելիքները

1. ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ և իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2. անգլերեն լեզվի իմացություն, որը թույլ է տալիս կիրառել այդ լեզվով հրատարակված տեխնիկական գրականությունը.
3. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
4. տիրապետում է թռիչքային գործունեությանն առնչվող տեղեկատվությանը:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

1. ընդհանուր 3000 (ինքնաթիռ) և/կամ 2500 (ուղղաթիռ) թռիչքաժամ, որից որպես օդանավի հրամանատար - 500 (հինգ հարյուր) թռիչքաժամ.
2. առնվազն 5 (հինգ) տարվա օդաչուական աշխատանքային ստաժ: